

**ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ**

29 մարտի 2000 թ.

Բազմակուսակցական Ս 651 բանաձևն արձանագրում է, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության հարավում, որն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի հետ միության մեջ էր, հայերը կազմում էին քրիստոնեական փոքրամասնություն:

Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմից այնտեղ իրականացվեցին հայ ժողովրդի զանգվածային սպանությունները: Զանգվածային ոչընչացումները տեղի ունեցան 1915 թ.: Այդ ողբերգության վերաբերյալ չկա ոչ մի ճշգրիտ վիճակագրություն: Սովորաբար ընդունված է համարել, որ ուղղակի ոչնչացման կամ էլ տեղահանության ժամանակ ստեղծված կենցաղային սարսափելի պայմանների հետևանքով զոհվեցին մեկից մինչև մեկուկես միլիոն հայեր: 250000 հայերի հաջողվեց ապաստան գտնել Ռուսաստանում, 200000-ը բռնի դարձան մուսուլմաններ, և 40000-ը հայտնվեցին Միքիայում: Երբ Թուրքիան 1918 թ. ներխուժեց Կովկաս, սպանվեցին ևս 50000-ից մինչ 100000 հայեր:

Բանաձևի մշակմանը մասնակցողները ենթադրում են, որ թուրքական ժամանակակից կառավարությունը և քաղաքական համակարգը հավանաբար չեն կարող պատասխանատվություն կրել այդ ժամանակ տեղի ունեցան հայերի զանգվածային սպանությունների համար, սակայն գտնում են, որ թուրքական պետությունը առնվազն պիտի որ հատուցի կենդանի մնացածների (կամ ժառանգների) վնասները:

Հանձնաժողովի եզրահանգումները

Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հայ ժողովրդի ցեղասպանության պաշտոնական ճանաչումը: 1985 թ. ՄԱԿ-ում և Եվրախորհրդարանում արձանագրվեց, որ Օսմանյան կայսրությունն այդ դարասկզբին իրակացրել է հայ ժողովրդի ցեղասպանություն: Հանձնաժողովը պաշտպանում է այն կարծիքը, որ եթե Թուրքիան իր անցյալի նկատմամբ հանդես բերի մեծ պատասխանատվություն, դրանով իսկ կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը Թուրքիայում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է անցկացնել հայ ժողովրդի ցեղասպանության անկախ, անկողմնակալ միջազգային հետաքննություն, որպեսզի հասնենք 1915 թ. և հետագայի պատմական դեպքերի բացահայտմանը: Այդ բնագավառում առաջխաղացումը կարող էր նույնիսկ ընդհանուր առմամբ նշանակություն ունենալ Կովկասյան տարածաշրջանի կայունության և զարգացման համար:

Sweden Parliament Report

March 29, 2000

The Foreign Ministry writes in its report:

"An official statement and recognition of the Genocide of the Armenians is important and necessary. In 1985 the UN and the European Parliament established the fact that the Ottoman Empire had committed genocide against the Armenian people in the

beginning of the 20th century. The Standing Committee [on Foreign Affairs] is of the opinion that the greater openness Turkey demonstrates, the stronger Turkey's democratic identity will be. It is therefore important that unbiased independent and international research on the genocide committed against the Armenian people be carried out. It is of great importance that an increasing openness and historical understanding of the events of 1915 and thereafter be developed. An improvement in this respect would also be of importance for the stability and the development in the whole Caucasus region."

Utrikesutskottet skriver i sitt betänkande att:

"Det är angeläget och nödvändigt med en officiell redovisning och erkännande av folkmordet på armenierna. 1985 fastslogs i FN och i Europaparlamentet att det ottomanska riket begått folkmord på det armeniska folket i början av detta sekel. Utskottet anser att ju större öppenhet Turkiet visar beträffande sitt förflutna desto mer bidrar det till att stärka Turkiets demokratiska identitet. Det är därför viktigt att det genomförs förutsättningslös oberoende internationell forskning om det folkmord som drabbat den armeniska befolkningen. Det vore av stor vikt om det kan utvecklas en ökad öppenhet och historisk förståelse för händelserna 1915 och därefter. En förbättring härvidlag torde även få betydelse för stabiliteten och utvecklingen i Kaukasusregionen i sin helhet."